ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«06» ապրիլ 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-06/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5294-16 և 16.02.2016թ. թիվ 1/73-3/5525-16 գրություններով ներկայացված «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2016թ. թիվ 1/73-1/5294-16 և 16.02.2016թ. թիվ 1/73-3/5525-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ)

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

2. «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 18.02.2016թ. թիվ 01/04.1/523-16 գրությամբ դիմել է «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 18.02.2016թ. թիվ 01/04.1/523-16 գրության՝ Ընկերությունը 25.02.2016թ. գրությամբ հայտնել է, որ «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն 31.12.2014թ. դրությամբ ունեցել է հարկվող շահույթ՝ 179 86,1 հազ. ՀՀ դրամ, որը կազմել է համախառն եկամտի 10 տոկոսը:

Ընկերությունը ունի արտարժույթով արտահայտված փոխառություններ (բանկային) և ընթացիկ կրեդիտորական պարտքեր (գնումների գծով), որոնց մնացորդների վերագնահատումը 31.12.2014թ. դրությամբ առաջացրել է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքի աճ ակտիվների նկատմամբ՝ 163 711,5 հազ. ՀՀ դրամ: 31.12.2013թ. պարտավորությունները վերագնահատվել են 1 ԱՄՆ դոլարը 405,64 ՀՀ դրամով, իսկ 31.12.2014թ.՝ 474,97 ՀՀ դրամով:

«Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 25.03.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 06.10.2015թ. թիվ 01/61-21235 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/156» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 6-11-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, 30.09.2015թ.ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.10.2015թ. տրամադրել է հարցման մասին եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերության վերոհիշյալ ընթացակարգին հայտ ներկայացնելու՝ 25.09.2015թ. դրությամբ, հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 163 711 530 ՀՀ դրամով գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության դրույթը և ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և Կարգի 122-րդ կետի դրույթներով՝ Պատվիրատու 1-ը խնդրել է նախաձեռնել Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Պատվիրատուն 1-ը 06.10.2015թ. թիվ 01/61-21235 և 08.02.2016թ. թիվ 03/61-6261h գրություններով ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/156» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 25.03.2016թ. 17:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:</u>

ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 03.11.2015թ. թիվ 18/6-86-15 գրությամբ հայտնել է, որ Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/13-ՀՀՔԿԴ-15/1», «ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգերի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունից պարզվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող:

Պատվիրատու 2-ը 03.11.2015թ. թիվ 18/6-86-15 և 10.02.2016թ. թիվ 08/18/431-16 գրություններով ներկայացրել է «ՇՀԱՊՁԲ-15/13-ՀՀՔԿԴ-15/1», «ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 25.03.2016թ. 17:30-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-06/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5294-16 և 16.02.2016թ. թիվ 1/73-3/5525-16 գրություններով ներկայացված «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/156» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն ***25.09.2015թ.*** հայտ է ներկայացրել:

2. «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 29.09.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.7 կետով որոշել է 6-11-րդ չափաբաժինների մասով «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 30.09.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 01.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար ***3 383 184 339*** և ***3 219 472 809*** ՀՀ դրամ:

6. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 02.10.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

7. ՀՀ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/13-ՀՀՔԿԴ-15/1» և ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար դռների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն ***26.10.2015թ.*** հայտեր է ներկայացրել:

8. «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն «ՇՀԱՊՁԲ-15/13-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

9. «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն «ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին

(այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) մասնակցելու նպատակով հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

10. ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին Ընթացակարգ 2-ի և Ընթացակարգ 3-ի շրջանակներում 29.10.2015թ. կատարված հարցումներով, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

11. Ի պատասխան վերը նշված հարցումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 30.10.2015թ. տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտերը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար ***3 383 184 339*** և ***3 219 472 809*** ՀՀ դրամ:

12. «ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

13. «ՇՀԱՊՁԲ-15/13-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2015թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

14. Կենտրոնի՝ սույն եզրակացության տրամադրման օրվա դրությամբ, Ընկերության կողմից չի վերականգնվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված ու Կենտրոնի և «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի միջև 07.08.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-15/13-180» ծածկագրով շրջանակային համաձայնագրին համապատասխան հաշվակված տուժանքը:

6. **<u>ՍՑ-ԳԲԽ-06/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի 25.02.2016թ գրությունը, Երևանի քաղաքապետարանի 06.10.2015թ. թիվ 01/61-21235 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ քննչական կոմիտեի 03.11.2015թ. թիվ 18/6-86-15 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: **<u>Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:</u>**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***<u>գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:</u>***

Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***շրջանակային համաձայնագրերի կնքման դեպքում հայտի ապահովման չափը հավասար է գնումների բազային միավորին***:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝***

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Նույն կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ***3 տարի ժամկետով***, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի ***1-ին***, 2-րդ և 3-րդ ***ենթակետերով նախատեսված տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը չեն վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:***

«Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն Ընթացակարգ 1-ին, 2-ին և 3-ին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտերի N 3.4 հավելվածների ֆինանսական միջոցների մասին հայտարարությունների «բ» ենթակետով ***հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:***

Պատվիրատուները, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված

հարցումներով, խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի՝ հայտերը ներկայացնելուն ***(25.09.2015թ. և 26.10.2016թ.)*** նախորդող հաշվետու տարվա ***(2014թ.)*** ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար ***3 383 184 339*** և ***3 219 472 809*** ՀՀ դրամ:

Այսպիսով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2015թ. և 30.10.2015թ. տրամադրված եզրակացությունների մեջ նշված Ընկերության կողմից հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ընկերության կողմից հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, հետևաբար «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգ 1-ի, 2-ի և 3-ի մասնակցության հայտերի N 3.4 հավելվածներով ներկայացված ֆինանսական միջոցների մասին հայտարարությունների «բ» ենթակետը չի համապատասխանում իրականությանը և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

«Նիկօ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով՝ Կենտրոնը արձանագրում է, որ «Նիկօ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***25.09.2015թ.*** մասնակցելով «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/156» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***26.10.2015թ.*** կրկին հայտեր է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-15/1» և «ՇՀԱՊՁԲ-15/13-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին, որոնց շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ ***<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է «Նիկօ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին</u> գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:***

Միևնույն ժամանակ Կենտրոնը արձանագրում է, որ սույն եզրակացության ներկայացման օրվա դրությամբ, Ընկերության կողմից չեն վերականգնվել Կենտրոնի և «Նիկօ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի միջև 07.08.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-15/13-180» ծածկագրով շրջանակային համաձայնագրին համապատասխան հաշվակված տուժանքի գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5294-16 և 16.02.2016թ. թիվ 1/73-3/5525-16 գրություններով ներկայացված «Նիկօ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00100623) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ

գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան